ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Կորյունի 15/1, Հեռ: (00 37410) 511-773

№ ԴԴ -3-Ե- 8879

« 22 » հոկտեմբերի 2021թ.

ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Կ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ
ՏՈՆԷՔՍ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Ա. ՇԱԲԱԲՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար տոներների և տոներային քարտրիջների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/24» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

1. ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ

- 16-րդ չափաբաժնի մասով eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ նաև Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված «Քարտրիջ ML-1610/2010/SCX4521» չի համապատասխանում Samsung ML2020 Laserjet սարքի համար նախատեսված քարտրիջին:

2. ՏՈՆԷՔՍ ՍՊԸ

- հայտով իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացված չէ, այլ լրացված է դիմում հայտարարության (Հավելված N 1) 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4.3 կետի 1) ենթակետի ե) պարբերությամբ սահմանված է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի կամ 1.3-ի (հայտարարագրերի ձևերը կցված են «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերին), իսկ դիմում հայտարարության 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը չի լրացվում).
- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարության (Հավելված N 1) տողերը հստակ (ընթեռնելի) և ամբողջական լրացված չեն, ինչպես նաև նշված դիմում հայտարարությունը մասնակցի կողմից հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ.
- 2-րդ, 7-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերում բացակայում են հրավերով նախատեսված՝ տոներների տեսակի և քաշի վերաբերյալ տարայի վրա նշագրման, ապրանքների չօգտագործված լինելու և գործարանային փաթեթավորման, ապրանքների արտադրման տարեթվի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև Վաճառողի միջոցների հաշվին ապրանքների տեղափոխման ու Գնորդի պահեստ բեռնաթափման վերաբերյալ հրավերով նախատեսված պայմանը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **հոկտեմբերի 25-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/24» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788